

ՀՀ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

Հ Ր Ա Վ Ե Ր

ՀՀ ՊՆ վարչական համալիրի աշխատակիցների սննդի կազմակերպման ծառայության մատուցման համար գնման պայմանագիր կնքելու նպատակով «ՀՀ ՊՆ-ԾՁԲ-21-7/4» ծածկագրով ընթացակարգի

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ՀՀ ՊՆ վարչական համալիրի աշխատակիցների սննդի կազմակերպման ծառայության մատուցման համար գնման պայմանագիր կնքելու նպատակով «ՀՀ ՊՆ-ԾՁԲ-21-7/4» ծածկագրով ընթացակարգի հրավերի

ՄԱՍ I.

1. Ընթացակարգի վերաբերյալ ընդհանուր տեղեկություն.
2. Ընթացակարգի և Հրավերի իրավական կարգավիճակը.
3. Ընթացակարգի առարկան.
4. Հրավերի պարզաբանումը և հրավերում փոփոխություն կատարելու կարգը.
5. Ընթացակարգի հայտերը ներկայացնելու կարգը.
6. Ընթացակարգի գնային առաջարկը.
7. Ընթացակարգի հայտի գործողության ժամկետը, հայտը հետ վերցնելու և դրանում փոփոխություն կատարելու կարգը.
8. Ընթացակարգի հայտերի բացումը.
9. Ընթացակարգի հայտերի գնահատումը.
10. Արդյունքների ամփոփումը.
11. Պայմանագրի կնքումը.
12. Ընթացակարգը չկայացած հայտարարելը.
13. Բողոքարկում.
14. Այլ դրույթներ:

ՄԱՍ II. ԸՆԹԱՑԱԿԱՐԳԻ ՀԱՅՏԸ ՊԱՏՐԱՍՏԵԼՈՒ ՀՐԱՅԱԼԳ

1. Ընդհանուր դրույթներ.
2. Ընթացակարգի հայտը.
3. Ընթացակարգի հայտը պատրաստելու կարգը.
4. Հավելվածներ 1-3:

ՄԱՍ I.

1. Ընթացակարգի վերաբերյալ ընդհանուր տեղեկություն

1.1 ՀՀ պաշտպանության նախարարությունը (իրավաբանական հասցե՝ ՀՀ, ք. Երևան, Բագրևանդի 5) (այսուհետ՝ Պատվիրատու) Հրավերի միջոցով հրավիրում է մասնավոր տնտեսավորողներին (այսուհետ՝ Մասնակից) ներկայացնելու առաջարկներ (այսուհետ՝ հայտեր) ՀՀ ՊՆ վարչական համալիրի աշխատակիցների սննդի կազմակերպման ծառայությունների մատուցման վերաբերյալ՝ ՀՀ պաշտպանության նախարարության հետ պայմանագրի կնքման հնարավորություն ստանալու նպատակով:

1.2 Հրավերը նպատակ ունի Պատվիրատուի կողմից առաջարկված ընթացակարգին (այսուհետ՝ Ընթացակարգ) մասնակցելու մտադրություն ունեցող մասնակիցներին տեղեկացնելու գնման ընթացակարգի պայմանների՝ գնման առարկայի, գնման ընթացակարգի անցկացման, հաղթողին որոշելու և նրա հետ պայմանագիր կնքելու մասին, ինչպես նաև օժանդակելու գնման ընթացակարգի հայտը պատրաստելիս:

1.3 Հայտի կազմման և մասնակցության վերաբերյալ ընթացակարգերն ու հրահանգները ներկայացված են ստորև:

1.4 Հրավերի տրամադրման համար գումար չի նախատեսվում:

2. Ընթացակարգի և Հրավերի իրավական կարգավիճակը

2.1 Ընթացակարգը միջույթ չէ, այլև ԱՆՀ-ի /առաջարկների ներկայացման համար/ ընթացակարգ է: Այն հանդիսանում է շուկայում առկա համապատասխան առաջարկների հավաքագրման գործընթաց, որի արդյունքում առաջարկներից լավագույնը կարող է ընդունվել: Ընթացակարգը չի կարգավորվում ՀՀ Զառնաքահական օրենսգրքի 463, 464, 465, 1043 և 1044 հոդվածներով և «Հրապարակային սակարկությունների մասին» ՀՀ օրենքով:

2.2 Ընթացակարգի Հրավերի հրապարակումը հայտ ներկայացնելու հրավեր է, և մասնակիցների կողմից պետք է դիտարկվի որպես այդպիսին:

2.3 Պատվիրատուի առաջարկն ունի օֆերտայի իրավական կարգավիճակ, որը պետք է ներառի պայմանագրի բոլոր էական պայմանները և պետք է դիտարկվի Մասնակցի կողմից սույն Հրավերի համաձայն: Մասնակիցների հայտերը ենթակա չեն հետագա փոփոխությունների, բացառությամբ Հրավերով նախատեսված դեպքերի:

2.4 Ընթացակարգի արդյունքում կնքված պայմանագիրը ամրագրում է Կողմերի կողմից ձեռք բերված բոլոր համաձայնությունները:

2.5 Այն բոլոր հարցերում, որոնք չեն կարգավորվում Հրավերով, Կողմերը պետք է առաջնորդվեն ՀՀ օրենսդրությամբ:

2.6 Հրավերով սահմանված կարգով հայտ ներկայացնելու ուժով և իրենց հետևանքի իրավունքից չօգտվելու դեպքում մասնակիցները համաձայնում են Հրավերով նախատեսված ընթացակարգերին և դրույթներին:

3. Ընթացակարգի առարկան

Ծառայության տեխնիկական բնութագրերը, ինչպես նաև մասնագիրը, տեխնիկական տվյալները և այլ ոչ գնային պայմանների ամբողջական և համաթեք նկարագրությունը կազմում են կնքվելիք պայմանագրի անբաժանելի մասը, որի նախագիծը ներկայացված է Հրավերի N 3 հավելվածում:

Հայտերի պատրաստման կարգը նկարագրված է սույն հրավերի II մասում՝ «Ընթացակարգի հայտը պատրաստելու հրահանգ»-ում:

Պայմանագրի կնքումից հետո Կատարողը կունենա երեքամսյա փորձաշրջան, որի ընթացքում կանցկացվի հաճախորդների գոհունակության եռամսյակային հարցում: Եթե հաճախորդների գոհունակության ցուցանիշը բարձր կլինի, ապա պայմանագիրը կերկարացվի ևս 9 ամսով: Յուրաքանչյուր տարվա վերջի երեք ամսում կանցկացվի հաճախորդների գոհունակության եռամսյակային հարցում: Եթե հաճախորդների գոհունակության ցուցանիշը բարձր կլինի, ապա պայմանագիրը կերկարացվի ևս 1 տարով: Իսկ եթե կլինեն գոհունակության ցածր ցուցանիշներ, ապա սահմանված կարգով կլուծարվի պայմանագիրը և կհայտարարվի նոր մրցույթ:

Հարցումը կկատարվի պատասխանատու ստորաբաժանման կողմից գրավոր հաճախորդների համապատասխան ղեկավարներին, որպեսզի վերջիններս կողմից իրենց ենթակայությամբ կատարվի հարցումներ ճաշատեսակների համայն, որակական ցուցանիշների, ամփոփարհիզմանի պայմանների և սպասարկման վերաբերյալ, որից հետո գրավոր կտեղեկացվի պատասխանատու ստորաբաժանմանը տեղեկատվություն՝ գոհունակության վերաբերյալ: Պատասխանատու ստորաբաժանման կողմից կամփոփվեն բոլոր հարցումները և գրավոր կտեղեկացվի:

Մասնակիցները կարող են ներկայացնեն առաջարկվող հավելյալ ծառայությունների ցանկը (բաց բուֆե, բուսական սնունդ, կոմպլեքս ուտեստներ (combo) և այլն):

Մատուցող անձնակազմի կողմից անգլերեն և ռուսերեն լեզուների իմացությունը կդիտարկվի որպես առավելություն:

4. Հրավերի պարզաբանումը և հրավերում փոփոխություն կատարելու կարգը

4.1 Մասնակիցն իրավունք ունի Պատվիրատուից պահանջել հրավերի պարզաբանում:

Սույն հրավերի վերաբերյալ պարզաբանումներ ստանալու համար Մասնակիցը կարող է դիմել Պատվիրատուին՝ գրավոր ձևով: Այդպիսի պարզաբանումների պահանջները կարող են ներկայացվել ոչ ուշ, քան Ընթացակարգի հայտերի ընդունման վերջնաժամկետը լրանալուց առնվազն հինգ օրացուցային օր առաջ:

4.2 Պատվիրատուն պարզաբանումը տրամադրում է հարցումը ստանալու օրվան հաջորդող երեք օրացուցային օրվա ընթացքում:

4.3 Հարցման և պարզաբանումների բովանդակության մասին տեղեկությունը տրամադրվում է հնարավոր մասնակիցներին՝ հարցումը կատարած մասնակցին պարզաբանումը տրամադրելու օրվան հաջորդող օրը, առանց նշելու հարցումը կատարած մասնակցի տվյալները:

4.4 Պարզաբանում չի տրամադրվում, եթե հարցումը կատարվել է 4.1 կետով սահմանված ժամկետի խախտմամբ, ինչպես նաև, եթե հարցումը դուրս է Ընթացակարգի հրավերի բովանդակության շրջանակից:

4.5 Հայտերի ներկայացման վերջնաժամկետը լրանալուց առնվազն հինգ օրացուցային օր առաջ հրավերում կարող են կատարվել փոփոխություններ:

5. Ընթացակարգի հայտերը ներկայացնելու կարգը

5.1 Ընթացակարգին մասնակցելու համար Մասնակիցը Պատվիրատուին է ներկայացնում հայտ: Մասնակիցը չի կարող նույն Ընթացակարգին ներկայացնել մեկից ավելի հայտ: **Մասնակիցը հայտ է ներկայացնում ողջ չափաբաժնի համար:**

Հայտերը ներկայացվում են մինչև դրա համար հրավերով սահմանված ժամկետի ավարտը:

5.2 Մասնակիցը հայտը ՀՀ ՊՆ գնումների կազմակերպման վարչություն ներկայացնում է մինչև **2021թ. հուլիսի 22-ը, ժամը 11⁰⁰-ն**, ք. Երևան, Բագրևանդի 5 հասցեով /ՀՀ պաշտպանության նախարարություն, 2071 սենյակ/: Ներկայացված հայտերն ընդունում, դրանց ներկայացման ճշտությունը ստուգում և հայտերի գրանցամատյանում գրանցումը կատարում է գնահատող հանձնաժողովի քարտուղար **Մ. Ադոնցը (հեռ. 010-29-44-18, Էլ.փոստ՝ m.adonts@mil.am)**, ծրարի վրա նշելով ստացման համարը, օրը և ժամը: Գնահատող հանձնաժողովի քարտուղարը հայտերը գրանցում է գրանցամատյանում՝ ըստ ստացման հերթականության՝ գրանցամատյանում նշելով գրանցման համարը, օրը և ժամը: Սույն կետի պահանջներին չհամապատասխանող հայտերը մերժվում են և առանց բացվելու վերադարձվում ներկայացնողին:

Հայտերը ներկայացնելու վերջնաժամկետը լրանալուց հետո ներկայացված հայտերը գրանցամատյանում չեն գրանցվում և դրանք՝ ստանալու օրվան հաջորդող երեք աշխատանքային օրվա ընթացքում քարտուղարի կողմից վերադարձվում են:

6. Ընթացակարգի գնային առաջարկը

6.1 Պայմանագրի գնի հաշվարկը պետք է ներառի տվյալ գնման պայմանագրի կատարումն ապահովելու նպատակով կատարվելիք բոլոր վճարները (ծախսերը), այդ թվում՝ հարկերի, տուրքերի, փոխադրման, ապահովագրման ծախսերը, պարգևավճարները և շահույթը:

6.2 Ընթացակարգի առաջարկի գինը ներկայացվում է Հայաստանի Հանրապետության դրամով:

6.3 Գնի վերաբերյալ առաջարկն անհրաժեշտ է ներկայացնել սույն հրավերի հավելված 2-ով նախատեսված տեսքով:

7. Ընթացակարգի հայտի գործողության ժամկետը, հայտը հետ վերցնելու և դրանում փոփոխություն կատարելու կարգը.

7.1 Ընթացակարգի հայտը վավեր է մինչև համապատասխան պայմանագրի կնքումը, Մասնակցի կողմից հայտի հետ վերցնելը, հայտի մերժումը կամ գնման գործընթացը չկայացած հայտարարվելը:

7.2 Մասնակիցը, մինչև սույն հրավերի 5.2 կետում նշված՝ հայտերի ներկայացման վերջնաժամկետը, կարող է փոփոխել կամ հետ վերցնել իր հայտը:

7.3 Հայտում փոփոխությունների մասին ծանուցումն ուղարկվում է սույն հրավերի II մասի՝ «Ընթացակարգի հայտը պատրաստելու հրահանգ»-ի 3.1 կետի պահանջներին համապատասխան կազմված ծրարով՝ դրա վրա ավելացնելով «փոփոխում» բառը: Հայտը հետ վերցնելու դեպքում Մասնակիցը, մինչև ընթացակարգի հայտերի բացումը, ներկայացնում է այդ մասին գրավոր ծանուցում:

8. Ընթացակարգի հայտերի բացումը

8.1 Հայտերի բացումը կկատարվի գնահատող հանձնաժողովի կողմից **2021թ. հուլիսի 22-ին, ժամը 11⁰⁰-ին** հանձնաժողովի նիստում, ՀՀ ՊՆ գնումների կազմակերպման վարչության նիստերի դահլիճում՝ ՀՀ պաշտպանության նախարարություն, ք. Երևան, Բազրևանդի 5 հասցեով:

8.2 Հայտերի բացման և գնահատման նիստում հրապարակվում են.

1) հայտ ներկայացրած յուրաքանչյուր Մասնակցի անվանումը (անունը),

2) տեղեկություններ՝ հայտեր պարունակող ծրարների կազմման և ներկայացման՝ Հրավերի պահանջներին համապատասխանության վերաբերյալ,

3) տեղեկություններ՝ բացված յուրաքանչյուր ծրարում Հրավերով պահանջվող փաստաթղթերի առկայության վերաբերյալ,

4) տեղեկություններ՝ յուրաքանչյուր Մասնակցի ներկայացրած փաստաթղթերի՝ Հրավերով սահմանված վավերապայմաններին համապատասխանելու մասին,

5) յուրաքանչյուր Մասնակցի առաջարկած գինը,

6) տեղեկություններ՝ հայտերի հետկանչման կամ փոփոխությունների մասին:

8.3 Հայտերը բացվելուց հետո կազմվում է արձանագրություն, որը կցվում է Ընթացակարգի արձանագրությանը: Արձանագրությունը ստորագրում են գնահատող հանձնաժողովի նիստին ներկա անդամները: Արձանագրությունը պարունակում է.

1) տեղեկություն հայտերի բացման վայրի, օրվա և ժամի մասին.

2) հայտեր ներկայացրած մասնակիցների անվանումները (անունները) և հասցեները.

3) տվյալներ ծրարների կազմման և ներկայացման՝ Հրավերի պահանջներին համապատասխանության մասին.

4) տվյալներ՝ բացված յուրաքանչյուր ծրարում Հրավերով պահանջվող փաստաթղթերի առկայության մասին.

5) տվյալներ՝ յուրաքանչյուր մասնակցի ներկայացրած փաստաթղթերի՝ Հրավերով սահմանված պայմաններին համապատասխան կազմած լինելու մասին.

6) յուրաքանչյուր մասնակցի առաջարկած գինը.

7) տվյալներ՝ ընտրված և հաջորդաբար տեղեր զբաղեցրած մասնակիցների վերաբերյալ.

8) Ընթացակարգը չկայացած հայտարարվելու դեպքում՝ դրա հիմնավորումը.

9) տեղեկատվություն՝ Ընթացակարգի հայտերի վերաբերյալ հարցումների և պատասխանների մասին.

10) հանձնաժողովի հաջորդ նիստի վայրը, օրը և ժամը.

11) նիստին ներկա հանձնաժողովի անդամների անունները և ազգանունները.

12) այլ անհրաժեշտ տեղեկություններ:

8.4 Եթե գնահատող հանձնաժողովի անդամը և (կամ) մասնակիցը հայտերի բացման և գնահատման վերաբերյալ ցանկանում է արտահայտել հայտերի բացման և գնահատման նիստի արձանագրության մեջ չներառված կարծիք (հատուկ կարծիք), ապա դա ներկայացնում է գրավոր՝ նիստի ընթացքում, որը կցվում է արձանագրությանը:

8.5 Մասնակիցները և նրանց ներկայացուցիչները կարող են ներկա գտնվել հանձնաժողովի նիստերին:

8.6 Հայտերի բացման և գնահատման նիստից անմիջապես հետո Ընթացակարգի առնչությամբ շահերի բախում ունեցող հանձնաժողովի անդամը ինքնաբացարկ է հայտնում Ընթացակարգից, հակառակ դեպքում նրան բացարկ է հայտնում հանձնաժողովի նախագահը: Երբ Ընթացակարգի առնչությամբ շահերի բախում ունի հանձնաժողովի նախագահը, ապա նա հայտնում է ինքնաբացարկ՝ բացառելով իր մասնակցությունը:

Ընթացակարգին, իսկ Ընթացակարգում նրան փոխարինում է հանձնաժողովի մեկ այլ անդամ: Հանձնաժողովի անդամները ստորագրում են շահերի բախման բացակայության մասին հայտարարություն:

8.7 Հայտերի բացման և գնահատման նիստի օրվան հաջորդող օրացուցային օրվա ընթացքում հայտերի բացման և գնահատման նիստի արձանագրության պատճենները տրամադրվում են այն մասնակիցներին, որոնք կամ որոնց ներկայացուցիչները չեն մասնակցել այդ նիստին:

8.8 Գնահատող հանձնաժողովի քարտուղարը հայտերի բացման և գնահատման նիստի օրվան հաջորդող երկու աշխատանքային օրվա ընթացքում հայտերը և դրանց գնահատման թերթիկները փոխանցում է գնահատող հանձնաժողովի անդամներին: Գնահատող հանձնաժողովի յուրաքանչյուր անդամ՝

- 1) գնահատում է ներկայացված հայտը.
- 2) գնահատման արդյունքներն արտացոլում է գնահատման թերթիկում.
- 3) իր ստորագրությամբ հաստատում է գնահատման թերթիկը.
- 4) հայտերն ստանալու օրվան հաջորդող հինգ աշխատանքային օրվա ընթացքում հաստատված գնահատման թերթիկը փոխանցում է քարտուղարին:

8.9 Գնումները համակարգողը երեք աշխատանքային օրվա ընթացքում ամփոփում է գնահատող հանձնաժողովի անդամների ներկայացրած գնահատման թերթիկները և կազմում հայտերի բացման և գնահատման արձանագրություն, որն ստորագրում են հանձնաժողովի անդամները:

9. Ընթացակարգի հայտերի գնահատումը

9.1 Գնահատող հանձնաժողովը՝

1) գնահատում է հայտեր պարունակող ծրարները կազմելու և ներկայացվելու համապատասխանությունը Հրավերով սահմանված կարգին՝ (և բացում համապատասխանող ծրարները),

2) գնահատում է բացված յուրաքանչյուր ծրարում հրավերով պահանջվող (նախատեսված) փաստաթղթերի առկայությունը և դրանց համապատասխանությունը հրավերով սահմանված վավերապայմաններին,

3) հանձնաժողովի նախագահը հայտարարում է Ընթացակարգի յուրաքանչյուր մասնակցի գնային առաջարկը՝ մեկ թվով արտահայտված՝ հիմք ընդունելով տառերով գրվածը.

Բավարար են գնահատվում հրավերով նախատեսված պայմաններին համապատասխանող հայտերը:

9.2 Ընտրված (հաղթող) մասնակիցը որոշվում է բավարար գնահատված հայտեր ներկայացրած մասնակցին նախապատվություն տալու սկզբունքով: Մասնակիցների գնային առաջարկների գնահատումն ու համեմատումն իրականացվում են առանց սույն կետում նշված հարկի գումարի հաշվարկման:

Հաղթող մասնակցի ընտրությունը կատարվելու է նվազագույն գնային առաջարկ ներկայացրած մասնակցին նախապատվություն տալու սկզբունքով, ընդ որում՝ մասնակիցները ծառայության համար գնային առաջարկը ներկայացնում է Հրավերի Հավելված N 2.1-ում ներառված ծառայության տողերի գների ընդհանուր հանրագումարի տեսքով, իսկ տողերի միավորների գները հաշվարկվելու են համաձայն հետևյալ բանաձևի՝

Մ.Գ. = Ա.Գ. / Ն.Գ. x Ն.Մ.Գ., որտեղ՝

Մ.Գ. – պայմանագրում ներառվող միավորի գին,

Ա.Գ. – մասնակցի առաջարկված միավորների գների հանրագումար,

Ն.Գ. – նախահաշվային միավորների գների հանրագումար,

Ն.Մ.Գ. - նախահաշվային միավորի գին:

Կնքվելիք պայմանագրի հավելված 1-ով նախատեսված հիմնական կերակրատեսակների ցանկում ներառված գները չեն կարող գերազանցել սույն հրավերի հավելված 2.1–ով սահմանված գները:

9.3 Եթե հայտում անհամապատասխանություն է տեղ գտել տառերով և թվերով գրված գումարների միջև, ապա հիմք է ընդունվում տառերով գրված գումարը:

9.4 Առաջարկված նվազագույն գների հավասարության դեպքում կամ եթե առաջարկված նվազագույն գները գերազանցում են նախատեսված տողերի գների ընդհանուր հանրագումարը՝

1) հաղթողին որոշելու նպատակով հանձնաժողովի նիստում առաջարկված գների նվազեցման նպատակով ոչ գնային պայմանները բավարարող գնահատված բոլոր մասնակիցների հետ վարվում են միաժամանակյա բանակցություններ, եթե նիստին ներկա են բոլոր մասնակիցները (համապատասխան լիազորություն ունեցող ներկայացուցիչները).

2) հակառակ դեպքում հանձնաժողովի նիստը կասեցվում է, և մեկ աշխատանքային օրվա ընթացքում գնահատող հանձնաժողովի քարտուղարը բավարար գնահատված բոլոր մասնակիցներին Էլեկտրոնային ձևով միաժամանակ ծանուցում է գների նվազեցման շուրջ միաժամանակյա բանակցությունների վարման օրվա, ժամի և վայրի մասին.

3) գների նվազեցման հնարավորության վերաբերյալ բանակցությունների տևողությունը սահմանվում է 30 րոպե.

4) բանակցությունները վարվում են ոչ ուշ, քան ծանուցումն ուղարկելու օրվան հաջորդող օրվանից հաշված երրորդ աշխատանքային օրը.

5) յուրաքանչյուր մասնակցի՝ տվյալ պահին ներկայացրած գնային առաջարկը հրապարակվում է մյուս մասնակիցների համար, և մինչև բանակցությունների համար նախատեսված վերջնաժամկետի ավարտը մասնակիցը կարող է վերանայել իր գնային առաջարկը.

6) բանակցությունների համար սահմանված վերջնաժամկետը լրանալու պահին, ըստ մասնակիցների ներկայացրած գների, որոշվում և հայտարարվում են ընտրված և հաջորդաբար տեղերը զբաղեցրած մասնակիցները:

Բանակցությունների արդյունքում եթե մասնակցի ներկայացրած գնային առաջարկը գերազանցում է Նախահաշվային գինը, ապա մասնակցին առաջարկվում է առանձին հավելվածով ներկայացնել ըմպելիքների, սևնդի, քաղցրեղենի, ճաշատեսակների և այլնի գների և բաղադրիչների ցանկը և ճաշատեսակների զուտ քաշը գրամներով:

9.5 Հայտի (հայտերի) ամբողջական և լիարժեք գնահատման արդյունքում գնահատող հանձնաժողովի կողմից անհամապատասխանություն արձանագրվելու (հայտնաբերվելու) դեպքում գնումները համակարգողը **երեք աշխատանքային** օրվա ընթացքում դրա մասին տեղեկացնում է մասնակցին՝ առաջարկելով մեկ աշխատանքային օրվա ընթացքում շտկել անհամապատասխանությունը: Արձանագրված անհամապատասխանությունը սահմանված ժամկետում՝

- ա. շտկելու դեպքում մասնակցի հայտը գնահատվում է բավարար.
- բ. չշտկելու դեպքում, գնահատող հանձնաժողովի որոշմամբ, տվյալ մասնակցի հայտը մերժվում է: Եթե ներկայացված բոլոր հայտերը չեն համապատասխանում հրավերի պայմաններին, ապա Ընթացակարգն այդ հիմքով չեղյալ է հայտարարվում:

9.6 Գնահատող հանձնաժողովը կարող է ստուգել մասնակցի ներկայացրած տվյալների իսկությունը՝ օգտագործելով պաշտոնական աղբյուրները ստացված տվյալները կամ դրա մասին ստանալով իրավասու մարմինների գրավոր եզրակացությունը: Եթե ներկայացրած տվյալների իսկության ստուգման արդյունքում տվյալները որակվում են իրականությանը չհամապատասխանող, ապա՝

- 1) Ընթացակարգին տվյալ մասնակցի մասնակցությունը դադարեցվում է.
- 2) ի հայտ եկած հանգամանքների մասին տեղեկությունները պատվիրատուի կողմից ուղարկվում են ՀՀ գլխավոր դատախազություն՝ ի հայտ գալու օրվան հաջորդող երեք աշխատանքային օրվա ընթացքում:

10. Արդյունքների ամփոփումը

10.1 Պայմանագիր կնքվելու (ընթացակարգի արդյունքում պայմանագիր չկնքվելու) դեպքում՝ այդ հանգամանքը հայտնի դառնալու օրվան հաջորդող օրացուցային օրը հրավիրվում է արդյունքների ամփոփման նիստ, որի ընթացքում հայտարարվում են ընթացակարգի արդյունքները:

10.2 Ամփոփման նիստի վերաբերյալ կազմվում է արձանագրություն, որը կցվում է գնման ընթացակարգի արձանագրությունը: Արձանագրությունը ստորագրում են հանձնաժողովի նիստին ներկա անդամները:

11. Պայմանագրի կնքումը

11.1 Պայմանագիր կնքվում է գնահատող հանձնաժողովի որոշման հիման վրա՝ պատվիրատուի կողմից:

11.2 Ընտրված մասնակից հայտարարվելուն հաջորդող **չորս աշխատանքային օրվա ընթացքում** պատվիրատուն ծանուցում է ընտրված մասնակցին՝ ներկայացնելով պայմանագիր կնքելու առաջարկը և պայմանագրի նախագիծը:

11.3 Եթե ընտրված մասնակիցը պայմանագիր կնքելու մասին ծանուցումը և պայմանագրի նախագիծը ստանալուց հետո **5 օրացուցային օրում** չի ստորագրում պայմանագիրը, ապա նա գրկվում է պայմանագիրը ստորագրելու իրավունքից: Այդ դեպքում պատվիրատուն գնման պայմանագիր կնքելու առաջարկ է ներկայացնում ընթացակարգում երկրորդ, իսկ վերջինիս կողմից առաջարկը չընդունվելու դեպքում՝ երրորդ և այլ տեղեր զբաղեցրած մասնակիցներին:

11.4 Մինչև 11.3 կետով նախատեսված ժամկետի ավարտը, կողմերի համաձայնությամբ կարող են պայմանագրի նախագիծում կատարվել փոփոխություններ, սակայն դրանք չեն կարող հանգեցնել գնման առարկայի բնութագրերի փոփոխմանը, ներառյալ ընտրված մասնակցի առաջարկած գնի ավելացմանը:

11.5 Գնման հետ կապված կողմերի՝ գնումների մասին ՀՀ օրենսդրությամբ չկարգավորված հարաբերությունները կարգավորվում են պայմանագրով:

12. Ընթացակարգը չկայացած հայտարարելը

- 12.1 Ընթացակարգը չկայացած է հայտարարվում, եթե՝
 - 1) հայտերից ոչ մեկը չի համապատասխանում հրավերի պայմաններին.
 - 2) դադարում է գոյություն ունենալ գնման պահանջը.
 - 3) ոչ մի հայտ չի ներկայացվել.
 - 4) պայմանագիր չի կնքվում:

12.2 Ընթացակարգը չկայացած հայտարարվելուց հետո արգելվում է բացել չբացված հայտերը, որոնք վերադարձվում են մասնակիցներին:

13. Բողոքարկում

13.1 Ընթացակարգի, ինչպես նաև Պատվիրատուի և Մասնակիցների կողմից իրենց պարտականությունները կատարելու առնչությամբ առաջացած բոլոր վեճերն ու տարաձայնությունները պետք է կարգավորվեն բանակցությունների միջոցով: Վեճերի կամ տարաձայնությունների վերաբերյալ պահանջ ստացող կողմը պետք է պատասխան ուղարկի մյուս կողմին պահանջը ստանալու օրից սկսած՝ 10

աշխատանքային օրվա ընթացքում: Վեճերի ծագման պահից՝ 30 օրվա ընթացքում լուծում չգտնելու դեպքում դրանք պետք է լուծվեն ՀՀ օրենսդրությամբ սահմանված դատական կարգով:

14. Այլ դրույթներ

14.1 Մասնակիցներն ինքնուրույն են հոգում հայտի պատրաստման և ներկայացման հետ կապված ծախսերը, մինչդեռ Պատվիրատուն որևէ պատասխանատվություն և պարտավորություն չի կրում այդ ծախսերի համար՝ անկախ Ընթացակարգի ընթացքից և արդյունքներից:

14.2 Պատվիրատուն ապահովում է մասնակիցներից ստացած բոլոր տեղեկությունների, այդ թվում նաև հայտերում նկարագրված տեղեկությունների գաղտնիությունը: Տվյալ տեղեկությունների տրամադրումն այլ մասնակիցներին կամ երրորդ կողմին հնարավոր է միայն ՀՀ գործող օրենսդրությամբ նախատեսված դեպքերում:

14.3 Պատվիրատուն իրավունք ունի Ընթացակարգի անցկացմանն առնչվող գործընթացները կասեցնել Ընթացակարգի ավարտման օրվանից առնվազն 5 օր առաջ՝ այդ մասին համապատասխանաբար ծանուցելով Մասնակիցներին: Պատվիրատուն պատասխանատվություն չի կրում Հրավերով նախատեսված գործընթացների կասեցման արդյունքում մասնակիցների կամ երրորդ անձանց կողմից կրած ծախսերի համար:

ՄԱՍ II.

ԸՆԹԱՑԱԿԱՐԳԻ ՀԱՅՏԸ ՊԱՏՐԱՍՏԵԼՈՒ ԶՐԱՅԱԼԳ

1. Ընդհանուր դրույթներ

1.1 Սույն հրահանգը նպատակ ունի օժանդակել մասնակիցներին գործընթացի հայտը պատրաստելու:

1.2 Նպատակահարմարության դեպքում մասնակիցը պահանջվող տեղեկությունները կարող է ներկայացնել սույն հրահանգով առաջարկվող ձևերից տարբերվող՝ այլ ձևերով՝ պահպանելով պահանջվող վավերապայմանները:

1.3 Ընթացակարգի հայտերը (ներառվող բոլոր փաստաթղթերը) պետք է կազմված լինեն հայերեն:

2. Ընթացակարգի հայտը

2.1 Ընթացակարգին մասնակցելու համար անհրաժեշտ է Պատվիրատուին ներկայացնել Ընթացակարգի հայտ:

Ընթացակարգի հայտը սույն հրավերով նախատեսված կարգով Ընթացակարգին մասնակցելու ցանկություն ունեցող անձի կողմից նախապատրաստված և պատվիրատուին ներկայացված գնման առարկայի վերաբերյալ առաջարկն է՝

2.2 Մասնակիցները Ընթացակարգի հայտով ներկայացնում են.

2.2.1 **Ընթացակարգին մասնակցելու դիմում-հայտարարություն (Հավելված 1).**

2.2.2 **գնային առաջարկ (Հավելված 2).**

2.2.3 գործակալության պայմանագրի պատճենը և դրա կողմ հանդիսացող անձի տվյալները, եթե պայմանագիրն իրականացվելու է գործակալության միջոցով.

2.2.4 համատեղ գործունեության պայմանագիրը, եթե մասնակիցները գնման ընթացակարգին մասնակցում են համատեղ գործունեության կարգով (կոնսորցիումով).¹

3. Ընթացակարգի հայտը պատրաստելու կարգը

3.1. Մասնակիցը հայտը ներկայացնում է Հրավերով սահմանված կարգով:

Մասնակցի հայտը, դրան վերաբերող բոլոր փաստաթղթերը դրվում են ծրարի մեջ, որը ստնձվում և կնքվում է այն ներկայացնողի ղեկավար մարմնի կողմից: Ծրարում ներառված փաստաթղթերը, կազմվում են բնօրինակից և առնվազն 2 օրինակ պատճեններից: Փաստաթղթերի փաթեթների վրա համապատասխանաբար գրվում են «բնօրինակ» և «պատճեն» բառերը: Եթե Ընթացակարգի հայտը ներկայացնում է գործակալը, ապա ներկայացվում է վերջինիս այդ լիազորությունը վերապահված լինելու մասին փաստաթուղթ:

3.2. Սույն հրահանգի 3.1 կետում նշված ծրարի վրա Ընթացակարգի հայտը կազմելու լեզվով նշվում են՝

ա) ՀՀ պաշտպանության նախարարություն, ք. Երևան, Բագրևանդի 5.

բ) «ՀՀ ՊՆ-ԾՁԲ-21-7/4».

գ) «Չբացել մինչև հայտերի բացման նիստը» բառերը.

դ) մասնակցի անվանումը (անունը), գտնվելու վայրը և հեռախոսահամարը:

¹ Համատեղ գործունեության կարգով (կոնսորցիումով) մասնակցելու դեպքում հայտում ներառվող՝ մասնակցի կողմից հաստատվող փաստաթղթերը պետք է հաստատված լինեն կոնսորցիումի բոլոր անդամների կողմից:

3.3. Սույն կետի 3.1 և 3.2 ենթակետերի պահանջներին չհամապատասխանող հայտերը գնահատող հանձնաժողովը հայտերի բացման և գնահատման նիստում մերժում է և նույնությամբ վերադարձնում ներկայացնողին:

Հավելված 1
«ՀՀ ՊՆ-ԾՁԲ-21-7/4» ծածկագրով
Ընթացակարգի հրավերի

Ընթացակարգին մասնակցելու դիմում-հայտարարություն

_____ -ը հայտնում է, որ ցանկություն ունի մասնակցել
մասնակցի անվանումը

ՀՀ պաշտպանության նախարարության կողմից «ՀՀ ՊՆ-ԾՁԲ-21-7/4» ծածկագրով հայտարարված
Ընթացակարգին և Հրավերի պահանջներին համապատասխան ներկայացնում է հայտ:

_____ -ն հայտնում և հավաստում է, որ հանդիսանում է
մասնակցի անվանումը

_____ ռեզիդենտ:
երկրի անվանումը

_____ -ի՝
մասնակցի անվանումը

- հարկ վճարողի հաշվառման համարն է՝ _____
հարկի վճարողի հաշվառման համարը
- Էլեկտրոնային փոստի հասցեն է՝ _____
Էլեկտրոնային փոստի հասցեն
- գործունեության հասցեն է՝ _____
գործունեության հասցեն
- հեռախոսահամարն է՝ _____
հեռախոսի համարը

Սույնով _____ -ն հայտարարում և հավաստում է, որ՝
մասնակցի անվանումը

ա) ունի գնման պայմանագրով նախատեսված պարտավորությունների կատարման համար պահանջվող
իրավունք, մասնագիտական գործունեության համապատասխանությունն պայմանագրով նախատեսված
գործունեությանը, մասնագիտական փորձառություն, տեխնիկական միջոցներ, ֆինանսական միջոցներ,
աշխատանքային ռեսուրսներ.

բ) դատական կարգով սնանկ ճանաչված չէ,

գ) _____ -ն կամ նրա գործադիր մարմնի ներկայացուցիչը հայտը ներկայացնելու
մասնակցի անվանումը

պահին նախորդող երեք տարիների ընթացքում դատապարտված չի եղել տնտեսական գործունեության կամ
պետական ծառայության դեմ ուղղված հանցագործության համար.

դ) ներառված չէ գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում.

ե) թույլ չի տվել և (կամ) թույլ չի տալու գերիշխող դիրքի չարաշահում և հակամրցակցային համաձայնություն.

զ) բացակայում է հրավերով սահմանված՝ _____ -ին փոխկապակցված անձանց և
մասնակցի անվանումը

(կամ) _____ -ի կողմից հիմնադրված կամ ավելի քան հիսուն տոկոս
մասնակցի անվանումը

_____ -ին պատկանող բաժնեմաս (փայաբաժին) ունեցող կազմակերպությունների
մասնակցի անվանումը

միաժամանակյա մասնակցության դեպք:

Ե) ստորև ներկայացնում է հայտը ներկայացնելու օրվա դրությամբ այն ֆիզիկական անձի (անձանց)
տվյալները, ով ուղղակի կամ անուղղակի ունի մասնակցի կանոնադրական կապիտալում քվեարկող
բաժնետոմսերի (բաժնեմասերի, փայերի) ավելի քան տասն տոկոսը, ներառյալ ըստ ներկայացնողի
բաժնետոմսերը, կամ այն անձի (անձանց) տվյալները, ով իրավունք ունի նշանակելու կամ ազատելու

մասնակցի գործադիր մարմնի անդամներին, կամ ստանում է մասնակցի կողմից իրականացվող ձեռնարկատիրական կամ այլ գործունեության արդյունքում ստացված շահույթի տասնհինգ տոկոսից ավելին (իրական շահառուներ)* և հավաստում, որ իրական շահառուների մասին ներկայացված տեղեկատվությունը իրական է և չի պարունակում ոչ հավատի տեղեկություններ:

Անունը Ազգանունը Հայրանունը	ՀՀ քաղաքացիների համար՝ նույնականացման քարտի կամ անձնագրի կամ ՀՀ օրենսդրությամբ նախատեսված անձը հաստատող փաստաթղթի տեսակը և համարը	Օտարերկրյա քաղաքացիների համար համապատասխան երկրի օրենսդրությամբ նախատեսված անձը հաստատող փաստաթղթի տեսակը և համարը

մասնակցի անվանումը (ղեկավարի պաշտոնը, անուն ազգանունը)

ստորագրությունը

Կ. Տ.

2021թ.

(անստորագրված, ամիսը)

Հավելված 2
«ՀՀ ՊՆ-ԾՁԲ-21-7/4» ծածկագրով
Ընթացակարգի հրավերի

Գնային առաջարկ

Ուսումնասիրելով «ՀՀ ՊՆ-ԾՁԲ-21-7/4» ծածկագրով Ընթացակարգի հրավերը, այդ թվում կնքվելիք պայմանագրի նախագիծը, _____-ն առաջարկում է պայմանագիրը

մասնակցի անվանումը

կատարել հետևյալ գներով:

Չափաբաժինների համարները	Ծառայության անվանումը	Արժեք (ինքնարժեքի և կանխատեսվող շահույթի հանրագումարը) /տառերով և թվերով/	ԱԱՀ* /տառերով և թվերով/	Ընդհանուր գինը /տառերով և թվերով/
1	2	3	4	5=3+4
1	<<Չնման առարկայի չափաբաժնի անվանում N1>>			

* Եթե Մասնակիցն ավելացված արժեքի հարկ վճարող է, ապա տվյալ պայմանագրի գծով Հայաստանի Հանրապետության պետական բյուջե վճարվելիք ավելացված արժեքի հարկի գումարը նշվում է 4-րդ սյունակում:

Մասնակիցը գնային առաջարկը ներկայացնում է մեկ թվով՝ միավորների գների ընդհանուր հանրագումարով, ընդ որում Հավելված N 2-ում լրացվում է Հավելված 2.1-ում ներառված կերակրատեսակների միավորների գների ընդհանուր հանրագումարը /Ընդամենը ստացվող գումարը/:

_____ մասնակցի անվանումը (ղեկավարի պաշտոնը, անուն ազգանունը)

_____ ստորագրությունը

Կ. Տ.

_____ 2021թ.
(ամսաթիվը, ամիսը)

Սննդի կազմակերպման ծառայություն

**ՑԱԼԿ
ՀԻՄՆԱԿԱՆ ԿԵՐԱԿՐԱՏԵՍԱԿՆԵՐԻ**

Հ/Հ	Կերակրատեսակ	Բաղադրություն	Քաշը գրամ	Միավորի գինը /ՀՀ դրամ/
1	2	3	4	5
Հաց				
1	Հաց սպիտակ (Տեսակը՝ ռուսական կաղապարային)	ՀԱՏ 31-101 մինչև 500 գրամանոց կաղապարային, տեսակը՝ ռուսական բատոն, փաթեթավորված կամ առանց փաթեթավորման: Անվտանգությունը՝ ըստ N 2-III-4, 9-01-2003 (ՌԴ Սան Պին 2, 3, 2-1078-01) սանիտարահամաճարակային կանոնների և Նորմերի ու «Սննդամթերքի անվտանգության մասին» ՀՀ օրենքի 9-րդ հովածի:	200 գ	80
2	Հաց սև (Տեսակը՝ ռուսական կաղապարային)	ՀԱՏ 31-101 մինչև 500 գրամանոց կաղապարային, տեսակը՝ ռուսական բատոն, փաթեթավորված կամ առանց փաթեթավորման: Անվտանգությունը՝ ըստ N 2-III-4, 9-01-2003 (ՌԴ Սան Պին 2, 3, 2-1078-01) սանիտարահամաճարակային կանոնների և Նորմերի ու «Սննդամթերքի անվտանգության մասին» ՀՀ օրենքի 9-րդ հովածի:	200 գ	80
Սառը Նախուտեստներ				
1	Աղցան՝ Մայրաքաղաքային	Տավարի թարմ միս, գազար, ոլոռ, կարտոֆիլ, ձու, թթվասեր, մայրնեգ, թթու վարունգ, համեմունք	150	400
2.	Աղցան՝ Վինեգրետ	Բազուկ, լոբի, կարտոֆիլ, թթու վարունգ, գազար, կանաչի, համեմունք, բուսական յուղ	150	300
3.	Աղցան՝ Թաբուլե	Բլիդր, տոմատ, մառուլ, կանաչ սոխ, լոլիկ, մաղադանոս, կիտրոն, համեմունք, բուսական յուղ	150	300
4.	Աղցան՝ Մարոլով	Մառուլ, կանաչ սոխ, համեմ, կանաչ սխտոր, բոլոկի, համեմունք, բուսական յուղ	150	250
5.	Աղցան՝ Բազուկով	Բազուկ, թթվասեր, մայրնեգ, ընկույզ, սամիթ, համեմունք	150	250
6.	Աղցան՝ Կորեական	Գազար, համեմունքներ	150	250
7	Աղցան՝ բանջարեղենային	Կաղամբ, գազար, ձեթ, համեմունքներ	150	200
8.	Աղցան՝ կաղամբով	Կաղամբ, գազար, թարմ կանաչի, կիտրոնի հյուլթ, համեմունք, բուսական յուղ	150	200
9	Աղցան՝ կարտոֆիլով և վարունգով	Թթու վարունգ, կարտոֆիլ, սոխ, ծիտրոն, համեմունք, բուսական յուղ	150	250
10	Աղցան՝ կարմիր լոբով	Կարմիր լոբի, թթու վարունգ, գազար, թարմ պղպեղ, թարմ կանաչի, համեմունք, բուսական յուղ	150	300
11	Աղցան քամած մածուկով՝	Հավի կրծքամիս, սխտոր, մարոլ, թարմ վարունգ, քամած մածուկ, եգիպտացորեն,	150	350

Հ/Հ	Կերակրատեսակ	Բաղադրություն	Քաշը գրամ	Միավորի գինը /ՀՀ դրամ/
1	2	3	4	5
	հավի կրծքամսով	համեմունք		
12	Աղցան տավարի փափկամսով	Տավարի փափկամիս, նուռ, ընկույզ, թարմ կանաչի, թթվասեր, մայրնեզ	150	550
13	Ցեզր	Ալյխտած հավի կրծքամիս, լոլիկ, հոլանդական պանիր, մարոլ, չորահաց, սոուս	150	400
14	Բանջարեղենային աղցան՝ սեզոնային	Դդմիկ, պղպեղ, լոլիկ, գազար, կանաչի, համեմունք	150	200
15	Սմբուկով աղցան	Սմբուկ, պղպեղ, լոլիկ, կանաչի, սխտոր, համեմունք	150	250
16	Սնկով աղցան	Սունկ, թթու վարունգ, կանաչ սոխ, սամիթ, համեմունք, կիտրոնի հյութ, բուսական յուղ	150	350
Առաջին կերակրատեսակներ				
1	Բորչչ	Կարտոֆիլ, կաղամբ, գազար, բազուկ, սոխ, կանաչի, տոմատ, համեմունք, բուսական յուղ	500	400
2	Բորչչ լոբով	Կարտոֆիլ, կաղամբ, գազար, բազուկ, սոխ, կանաչի, տոմատ, համեմունք, բուսական յուղ, թարմ կանաչ լոբի	500	400
3	Բորչչ՝ մսով	Կարտոֆիլ, կաղամբ, գազար, բազուկ, սոխ, կանաչի, տոմատ, համեմունք, բուսական յուղ, թարմ տավարի միս	450/50	600
4	Սուպ խարչո	Բրինձ, ձավար, տավարի միս, կարտոֆիլ, սոխ, տոմատ, սխտոր, տխեմալի, համեմունք, բուսական յուղ	500	500
5	Աղապուր՝	Տավարի թարմ միս, խոզապուխտ, թռչնի միս, նրբերշիկ, սոխ, թթու վարունգ, լիմոն, ձիթապտուղ, կապերս, թթվասեր, համեմունք, բուսական յուղ	500	700
6	Բրնձով ապուր	Կարտոֆիլ, բրինձ, գազար, արգանակ, թարմ կանաչի, սոխ, համեմունք, բուսական յուղ	500	360
7	Դեղին ոլոռով ապուր	Արգանակ, ոլոռ, կարտոֆիլ, գազար, սոխ, տոմատ, համեմունք, բուսական յուղ	500	360
8	Կանաչ ոլոռով ապուր	Արգանակ, ոլոռ, կարտոֆիլ, գազար, սոխ, տոմատ, համեմունք, բուսական յուղ	500	360
9	Մակարոնեղենով ապուր	Կարտոֆիլ, մակարոնեղեն, գազար, արգանակ, սոխ, տոմատ, համեմունք, բուսական յուղ	500	360
10	Ոսպով ապուր	Կարտոֆիլ, ոսպ, գազար, արգանակ, սոխ, տոմատ, համեմունք, բուսական յուղ	500	360
11	Կարմիր լոբով ապուր	Կարտոֆիլ, կարմիր լոբի, գազար, արգանակ, սոխ, տոմատ, համեմունք, բուսական յուղ	500	450
12	Կանաչ լոբով ապուր	Կարտոֆիլ, կանաչ լոբի, գազար, արգանակ, սոխ, տոմատ, համեմունք, բուսական յուղ	500	450
13	Սպաս	Մածուկ, ձավար, թարմ կանաչի, թթվասեր, կարագ, ձու	500	400
14	Գյուղական ապուր	Փիփերթ, կարտոֆիլ, բլրուր, գազար, սոխ, տոմատ, համեմունք, բուսական յուղ, թարմ կանաչի	500	400
15	Ավելուկով ապուր	Ավելուկ, կարտոֆիլ, բլրուր կամ ոսպ, գազար, սոխ, տոմատ, համեմունք, բուսական յուղ, թարմ կանաչի	500	400

Հ/Հ	Կերակրատեսակ	Բաղադրություն	Քաշը գրամ	Միավորի գինը /ՀՀ դրամ/
1	2	3	4	5
16	Սնկով ապուր	Սունկ՝ շամպինիոն, բրինձ, թարմ կանաչի, գազար, սոխ, համեմունք, բուսական յուղ, կարտոֆիլ	500	400
17	Աջաբսանդալ	Սմբուկ, լոլիկ, կանաչ պղպեղ, բամիա, սոխ, կարտոֆիլ, թարմ կանաչի, համեմունք, բուսական յուղ	500	400
Երկրորդ կերակրատեսակներ				
1	Շոգեխաշած տավարի միս	Տավարի թարմ միս, դափնու տերև, համեմունք	70	500
2	Տապակած խոզի միս	Խոզի թարմ փափուկ միս, համեմունք, սոխ բուսական յուղ	70	500
3	Խոզի ժարկո՝ մանրակտոր	Խոզի թարմ միս, համեմունք, սոխ բուսական յուղ	70	500
4	Տավարի կոտլետ	Տավարի թարմ միս, սոխ, հաց, թարմ կանաչի, համեմունք, պաքսիմատ	1 հատ	360
5	Տավարի գուլյաշ	Տավարի թարմ միս, սոխ, թարմ կանաչի, համեմունք, տոմատ, այլուր, բուսական յուղ թթվասեր	200	500
6	Լանգետ տավարի ֆիլեից	Տավարի թարմ միս, համեմունք, բուսական յուղ	100	600
7	Տծվժիկ	Տավարի թարմ սիրտ, թոք, սոխ, համեմունք, բուսական յուղ	200	500
8	Մակարոն՝ նավաստիական	Տավարի միս, մակարոնեղեն, , սոխ, համեմունք, բուսական յուղ	200/50	400
9	Դոլմա	Տավարի թարմ միս, բրինձ, սոխ, կաղամբ, տոմատ, կարագ համեմունք, բուսական յուղ	250	450
10	Գյառնի- յարախ	Տավարի թարմ միս, սոխ, սմբուկ, թարմ կանաչի, լոլիկ, համեմունք, բուսական յուղ	200/50	450
11	Հավի կրծքամիս	Հավի կրծքամիս, համեմունք, բուսական յուղ	70	400
12	Հավի գուլյաշ	Հավի միս սոխ, թարմ կանաչի, համեմունք, տոմատ, այլուր, բուսական յուղ թթվասեր	200	400
13	Զարաջիկը սոռսում	Հավի քարաջիկ, սոխ, թարմ կանաչի, համեմունք, տոմատ, այլուր, բուսական յուղ թթվասեր	200	400
14	Ճուտ՝ տապակած	Հավի թարմ ճուտ, համեմունք, բուսական յուղ	220	700
15	Հավի ազդրամիս տապակած	Հավի թարմ ազդրամիս, համեմունք, բուսական յուղ	170	400
16	Հավի թևիկներ՝ տապակած	Հավի թարմ թևիկներ, աջիկա, համեմունք, բուսական յուղ	100	350
17	Զյուֆթա	Տավարի թարմ փափկամիս, ձու, սոխ, այլուր, կոնյակ, կարագ, համեմունք	120	500
18	Տապակած ձուկ	Ձուկ պանգասիուս, սոխ, տոմատ, մայրնեգ, համեմունք, բուսական յուղ	120	400
19	Խաշած ձուկ՝ իշխան	Ձուկ իշխան, համեմունք, դափնու տերև, կիտրոն, թարխուն	220	600
20	Խիսկալի	Տավարի թարմ միս, սոխ, թարմ կանաչի, սխտոր, այլուր, ձու, կարագ, համեմունք	400 /3 հատ	500
21	Պելմենի	Տավարի թարմ միս, սոխ, թարմ կանաչի, սխտոր, այլուր, ձու, կարագ, համեմունք	250	500
22	Նրբերշիկ	Բարձր I և II տեսակների, պատրաստված տավարի և խոզի, տավարի և հորթի մսերից, ՊՕՍՏ 23670-79, անվտանգությունը ըստ՝ N 2-III-4, 9-01-2003 (ՌԴ Սան Պին 2, 3, 2-1078-01) սանիտարահամաճարակային կանոնների և նորմերի և “Մենդամթերքի անվտանգության մասին” ՀՀ օրենքի 9-րդ հոդվածի	150	450
23	Սարդեկա	Բարձր, I և II տեսակների, պատրաստված տավարի և խոզի, տավարի և հորթի	150	450

Հ/Հ	Կերակրատեսակ	Բաղադրություն	Քանակը գրամ	Միավորի մինը գինը /ՀՀ դրամ/
1	2	3	4	5
		մսերից, ՉՕՍՏ 23670-79, անվտանգությունը ըստ՝ N 2-III-4, 9-01-2003 (ՌԴ Սան Պին 2, 3, 2-1078-01) սանիտարահամաճարակային կանոնների և նորմերի և “Սննդամթերքի անվտանգության մասին” ՀՀ օրենքի 9-րդ հոդվածի		
24	Խոզի փափկամիս՝ թարմ ֆիլեից	Խոզի թարմ միս, համեմունք, սոխ բուսական յուղ	150	750
25	Էսկալոպ՝ խոզի թարմ չալաղաջ	Խոզի թարմ չալաղաջ, սունկ, հոլանդական պանիր, համեմունք, բուսական յուղ	150	750
26	Խոզի մսով ռուլետ՝ թարմ տեղական մսով	Խոզի թարմ միս, սունկ, հոլանդական պանիր, կանաչ սոխ, թթվասեր, համեմունք	120	750
27	Խոզի լանգետ ֆիլեից	Խոզի թարմ միս, համեմունք, սոխ բուսական յուղ	120	600
28	Հարիսա	Ձավար, հավի թարմ փափկամիս, համեմունք, կարագ,	480/20	500
Խավարտներ				
1	Հնդկաձավարի	Հնդկաձավար, համեմունք, բուսական յուղ	200	250
2	Բրնձով	Բրինձ, համեմունք, բուսական յուղ	200	200
3	Բրնձով ոսպով	Բրինձ, ոսպ, համեմունք, բուսական յուղ	200	250
4	Բրնձով գազարով	Բրինձ, գազար, համեմունք, բուսական յուղ	200	250
5	Սպագետտի	Սպագետտի, համեմունք, բուսական յուղ	200	200
6	Մակարոնեղենով	Մակարոնեղեն, համեմունք, բուսական յուղ	200	200
7	Տապակած կանաչ լոբի	Կանաչ լոբի, համեմունք, բուսական յուղ	200	400
8	Հաճարով	Հաճար, համեմունք, բուսական յուղ	200	250
9	Հաճարը՝ սևկով	Հաճար, սունկ համեմունք, բուսական յուղ	200	400
10	Դեղին ոլոռով պյուրե	Դեղին ոլոռ, համեմունք, բուսական յուղ	200	200
11	Լոլիկով ձվածեղ	Լոլիկ, ձու, թարմ կանաչ պղպեղ, կանաչի, համեմունք, կարագ	200	300
12	Տապակած բանջարեղեն	Լոլիկ, սմբուկ, պղպեղ, սոխ, սխտոր, կանաչի, համեմունք, բուսական յուղ	200	350
13	Տապակած կարտոֆիլ	Կարտոֆիլ, համեմունք, բուսական յուղ	200	350
14	Տապակած կանաչի	Սեզոնային կանաչի, սոխ, համեմունք, բուսական յուղ	200	400
15	Շոգեխաշած կաղամբ	Կաղամբ, գազար, սոխ, տոմատ, դափնու տերև, թարմ կանաչի, համեմունք, բուսական յուղ	200	250
16	Գազարով պերեց	Գազար, պղպեղ, սոխ, կանաչի համեմունք, բուսական յուղ, տոմատ	200	350
17	Կարտոֆիլի պյուրե	Կարտոֆիլ, կարագ, աղ	200	350
18	Կարտոֆիլի ֆրի	Կարտոֆիլ, համեմունք, բուսական յուղ	200	350
19	Տապակած կանաչ լոբի	Կանաչ լոբի, սոխ, սխտոր, սամիթ, համեմունք, բուսական յուղ	200	400
Ըմպելիքներ				
1	Հանքային ջուր,	Խմելու բուժիչ սեղանի ջուր, հիդրոկարբոնատային, նատրումական, սիլիկատային բորային գազավորված 0.5լ. պոլիմերյան տարաներում կամ ապակյա շշերում, ՀՍՏ	Հատ	180

Հ/Հ	Կերակրատեսակ	Բաղադրություն	Քաշը գրամ	Միավորի մեծությունը /ՀՀ դրամ/
1	2	3	4	5
		191 - 2000: Պահպանման ժամկետը մեկ տարի:		
2	Բնական ջուր	Խմելու սեղանի ջուր, 0.5լ. պոլիմերյան տարաներում և ապակյա շշերում, ՀՍՍ 191 - 2000: Պահպանման ժամկետը մեկ տարի:	Հատ	150
3	Բնական հյութ	Պատրաստված թարմ մրգերից և պտուղներից, պտղամասով, շաքարի օշարակի հավելումով կամ առանց դրա, արտաքին տեսքով պարզ՝ նստվածքի զանգվածային մասը 0,2% ոչ ավելի և ոչ պարզ՝ 0, 8% ոչ պակաս, փաթեթավորումը՝ 1լ-նոց ստվարաթղթե տուփերով կամ շշայցված՝ ապակե տարայով:	Հատ	600
4	Կոկա-կոլա, ֆանտա, սպրայթ	Գազավորված զովացուցիչ ըմպելիք <Կոկա կոլա, Ֆանտա, Սպրայթ>, 0.5 լ. պլաստմասե շշերով: Պարունակությունը՝ ջուր, շաքար, ածխածնի երկօքսիդ, գուլանյութ / շաքարային կոլեր IV/, թթվանյութային կարգավորիչ /ֆոսֆորաթթու/, բուսական թուրմեր, կոֆեին: Պոլիէթիլենային փաթեթավորմամբ, մեկ փաթեթի մեջ 12 շիշ: Պիտանելիության ժամկետը մատակարարման օրվանից ոչ պակաս քան 20%:	Հատ	300
5	Լիմոնադ	Գազավորված զովացուցիչ ըմպելիք՝ Տարբեր համերի՝ տեսակի, 0. 5 լ-նոց ապակյա շշերով: Բաղադրությունը՝ խմելու աղբյուրի ջուր, բնական համբուրավետիչ <Տարբեր համեր>, կիտրոնաթթու, նատրիումի բենզոնատ, ածխածնի երկօքսիդ:	Հատ	150
6	Կոմպոտ թարմ մրգերից	Միրգ, հատապտուղ, շաքարավազ, կիտրոն	Բաժակ	150
7	Թան	Թան 0.5լ-նոց պլաստմասե շշերով, բաղադրությունը՝ անարատ կաթ, յուղա-գուրկ կաթ, մակարո, աղ, սպիտակուցներ 1.4 գր. յուղ 1.3 գր., ածխաջրեր 1.9 գր., Էներգետիկ արժեքը 25 կկալ /100 գր-ում/:	հատ	200
8	Մածնաբրդոշ	Մածուն, վարունգ, սամիթ, աղ,	Բաժակ	250
9	Սառը թեյ	Սառը թեյ, 18 գրամ հերմետիկ պոլիէթիլենային փաթեթով, բաղադրությունը՝ շաքար 94%, լուծվող սև թեյ 3. 6%, լիմոնաթթու 1. 3%, ասկորբինաթթու 0. 6%, բնականին նույնանման բուրմունքանյութ <Տարբեր համերի> 0. 5%:	Բաժակ	200
Բուժեման համար				
Տաք ըմպելիքներ				
1	Կիսել	Մրգային, թարմ, 250 գր. , տուփերով, անվտանգությունը՝ Սան Պին 2. 3. 2-560-96, ռուսական արտադրության կամ համարժեք:	Բաժակ	150
2	Թեյ	Թեյ թղթյա տուփով, ԳՕՍՍ-1937-90	Բաժակ	150
3	Սուրճ	Բնական սուրճ՝ աղացած, 1-ին տեսակի, ԳՕՍՍ 6805-97,	Բաժակ	70
4	Տաք շոկոլադ	Կակաոյի լուծվող ըմպելիք, 20 գրամ հերմետիկ պոլիէթիլենային փաթեթով, բաղադրությունը՝ շաքար, կակաոյի փոշի, սերուձքի փոխարինիչ, մալտոդեքստրին, աղ, բնականին նույնանման բուրմունք-քանյութեր <Շոկոլադ, վանիլ, կարամել>, խտացուցիչ <քսանտային բուսախեժ>, գնդավորմանը արգելք հանդիսացող կյուլթ՝ սիլիցիումի երկօքսիդ, քաղցրացուցիչ <կալցիումի, ագեսուլֆամ, նատրիումի սախարինատ, նատրիումի ցիկլամիտ>:	Բաժակ	250
5	Մակ սուրճ	Լուծվող սրճային ըմպելիք /3-ը 1-ում/, 20 գրամ հերմետիկ պոլիէթիլենային փաթեթով,	Բաժակ	250

Հ/Հ	Կերակրատեսակ	Բաղադրություն	Քաշը գրամ	Միավորի գինը /ՀՀ դրամ/
1	2	3	4	5
		բաղադրությունը՝ շաքար, սերուձքի փոխարինիչ /գլյուկոզայի օշարակ, բուսական յուղեր, կազեին, լակտոզա, կայունացուցիչներ / E 340 i i, E 341 i i, E 452 i / և էմուլգատորներ /E 471, E 472 e/, մարտոդեքստրին, լուծվող բնական սուրճ:		
6	Լուծվող սուրճ	Լուծվող սուրճ 2 գր-ոց փայլաթիթեղային և պոլիէթիլենային փաթեթավորմամբ,	Բաժակ	250
Բուսեղբրոտներ				
1	Ապխտած խոզի մսով	Չաց, ապխտած խոզի միս, հավելում*	80/40/5	350
2	Ապխտած տավարի մսով	Չաց, ապխտած տավարի միս, հավելում*	80/40/5	400
3	Ապխտած երշիկով	Չաց, ապխտած երշիկ, հավելում*	80/40/5	400
4	Վետչինայով	Չաց, վետչինա, հավելում*	80/40/5	350
5	Հոլանդական պանրով	Չաց հոլանդական պանիր, հավելում*	80/40/5	400
6	Լոռի պանրով	Չաց, լոռի պանիր, հավելում*	80/40/5	350
7	Նրբերշիկով	Չաց, նրբերշիկ, հավելում*	80/40/5	300
8	Չավի կրծքամսով	Չաց, հավի կրծքամիս, հավելում*	80/40/5	350
9	խոզի մանրակտորներով	Չաց, խոզի միս մանրակտորներով, հավելում*	80/40/5	400

	Կերակրատեսակ	Բաղադրություն	հում մթ-ի քաշը (գր)	եփած մթ-ի քաշը (գր)	Միավորի գինը /ՀՀ դրամ/
	Տավարի մսով				
1	Բիֆշտեքս	տավարի միս, սոխ, ձու ձեթ	130	80	500
2	Տավարի մսով ծոխ բույն	տավարի միս, սոխ, կարտոֆիլ, ձու, ոլոռ, ձեթ ...	130	80	240
3	Տավարի միս սպագետտիով	տավարի միս, սոխ, սպագետտի, ձեթ ...	110	70	400
4	Տավարի մսով ազու	տավարի միս, կարտոֆիլ, տոմատ, սոյայի սոուս, տաքղեղ, սոխ, ձեթ ...	180	170	240
5	Մանթիներ	միս, ալյուր, կարագ	50	30	80
6	Տավարի միս սևկով, պանրով	տավարի միս, սունկ, պանիր, մակարոն, տոմատ, ձեթ	160	170	360
7	Տավարի հյութալի կոտլետ բանջարեղենով	Միս, կաղամբ, սոխ, ձեթ, պղպեղ ...	120	70	300

	Կերակրատեսակ	Բաղադրություն	հուն մթ-ի քանո՞ւ (գր)	եփած մթ-ի քանո՞ւ (գր)	Միավորի գինը /ՀՀ դրամ/
8	Պասուց դոլմա	սիսեռ, սոխ, բանջարեղեն, կարագ, բրինձ	140	90	200
9	Տավարի միս լոբով	տավարի միս, լոբի, ընկույզ, աջիկա, ձեթ . .	150	170	240
10	Տավարի մսով ու բանջարեղենով ճաշ	միս, բուլղարական պղպեղ, բրոկոլի, սոյայի սոուս, ձեթ ...	160	190	350
11	Ամառային դոլմա	միս, սոխ, բանջարեղեն, կարագ, բրինձ	120	70	150
12	Մսով լցնած կարտոֆիլ	միս, սոխ, մաքրած կարտոֆիլ, հոլանդական պանիր, ձեթ ...	170	130	360
13	Տավարի քյաբաբ	միս, սոխ, կարագ ...	110	70	400
14	Ֆիրմային կոտլետ ընկույզով	միս, սոխ, պաքսիմատ, ընկույզ, ձեթ ...	100	60	150
15	Մսկով լցնած կոտլետ	միս, սոխ, պաքսիմատ, սունկ, պանիր, ձեթ. . .	110	70	350
16	Տավարի մսով ռուլետ	տավարի միս, պանիր, կաթնաշոռ, ձեթ	90	60	300
17	Կեր ու սուս	միս, ոլոռ, կարտոֆիլ, տոմատ, թթվասեր, ձեթ....	130	170	400
18	Ֆիրմային ճաշ	միս, սունկ, կարտոֆիլ, ձեթ, տոմատ....	160	170	240
19	Օստրի	միս, սոխ, սոյայի սոուս, տաքդեղ, համեմ, ձեթ, տոմատ....	150	160	300
20	Մաղամ բովարի տավարի մսով	միս, հոլանդական պանիր, սունկ, ձեթ. .	150	170	400
21	թփով դոլմա	միս, սոխ, թուփ, կարագ, բրինձ....	40	30	60
22	Իշլի քյուֆթա	միս, բլղուր, կարագ...	110	70	350
23	Տապակած քյուֆթա	քյուֆթա, սոխ, կարագ...	140	90	200
24	Նրբաբլիթ	միս, ալյուր, սոխ, կաթ, ձեթ, ...	120	70	240
25	ուզբեկական դավուրմա	միս, կարագ, կարտոֆիլ, գազար, սոխ . .	210	180	234
26	դավուրմա բրնձով	միս, բրինձ, սոխ, կարագ	220	130	234
27	չաքապուլի	միս, սալոր, թարխուն, համեմ, սոխ, կարագ. .	160	130	210
28	սուլթանի քյաբաբ	միս, ժիդկիյ դիմ, կարագ, մուսկաթի արեխ . . .	120	70	400
29	տավարի սուվլակի	միս, պղպեղ, կարագ...	110	70	400
30	ամառային խաշլամա	միս, սմբուկ, պղպեղ, պոմիդոր, սոխ, կարագ	220	200	250
31	Հորթի մսով չինական ճաշ	միս, բրոկոլի, բուլղարական պղպեղ, սոյայի սոուս, ձեթ...	160	150	198
32	Սուլի մանթի սիսեռով	միս, ալյուր, կարագ, սիսեռ...	70	50	90
33	տավարի միս գարեջրով, դոշաբով	միս, գարեջուր, դոշաբ, տոմատ, ձեթ	160	170	198
Խոզի մսով					
1	Օսո-բուկո	խոզի միս, քյարաուզ, գինի, սոխ, ձեթ	140	190	300
2	խոզի լանգետ սոուսով	միս, մեղր, սոյայի սոուս, տոմատ, ձեթ, . .	150	90	550

	Կերակրատեսակ	Բաղադրություն	հուն մթ-ի քանո՞ւ (գր)	եփած մթ-ի քանո՞ւ (գր)	Միավորի գինը /ՀՀ դրամ/
3	խոզի լանգետ ասորտի	միս, ընկույզ, գազար, սունկ, թթվասեր, հոլ. պանիր, ձեթ...	140	80	550
4	խոզի մսով չինական ճաշ	միս, բրոկոլի, բուլղարական պղպեղ, սոյայի սոուս, ձեթ...	170	180	234
5	Օջախուրի	կարտոֆիլ, միս, ձեթ, աջիկա, մեղր, սխտոր, սոխ, բուլղարական պղպեղ, սունեղի	220	230	450
6	խոզի լանգետով ծրարներ	խոզի միս, եգիպտացորեն, ոլոռ, ձեթ...	150	90	234
7	խոզապուխտով լցունած կարտոֆիլ	միս, կարտոֆիլ, պանիր, ձեթ . .	140	80	250
8	վետչինայով և սնկով լցունած կարտոֆիլ	վետչինա, սունկ, կարտոֆիլ, պանիր	155	90	250
9	Սոուս ասորտի	հավի միս, տավարի միս, խոզի միս, բրոկոլի, սունկ, տաքդեղ, ձեթ . . .	170	200	240
10	ժարկո կարտոֆիլով	կարտոֆիլ, խոզի փափուկ միս, ձեթ, սոխ, պղպեղ ...	200	230	420
11	խոզի այբանական կոտլետ	միս, ձու, տաքդեղ, սոխ, կարագ ...	130	80	350
12	ռուլետ խոզի մսով, սպանախով	խոզի միս, սպանախ, պանիր, լոլիկ, ձեթ...	130	80	350
13	Պալիբո խոզի մսով	խոզի միս, խառը բանջարեղեն, տոմատ, մեղր, ձեթ, . .	130	80	210
14	խոզի տեֆտելի	խոզի միս, սոխ, ձեթ...	100	70	210
15	Մադամ բովարի խոզի մսով	խոզի միս, հոլանդական պանիր, շամպիլյոն, ձեթ, սուճախ, ժիդկի դիմ . .	150	170	500
16	խոզի շաուրմա	լավաշ, միս, կարտոֆիլ, կաղամբ, ձեթ, .	260	290	600
17	խոզի մատեր	միս, կարտոֆիլ տոմատ, ձեթ ...	190	120	450
18	Ամանոյա խոզի բուր	խոզի միս, սխտոր, գազար, չաման, ձեթ. Դափնու տերև, համեմուկք	140	60	360
19	խոզի նագետիներ	խոզի միս, պակսիմատ, ձեթ	90	60	240
20	խոզի միս գինիով	միս, սոխ, ձեթ, գինի	170	190	300
21	խոզի միս սնկով	միս, սոխ, ձեթ, սունկ	160	170	300
22	խոզի միս բանջարեղենով	միս, սոխ, ձեթ, խառը բանջ. . .	180	190	400
23	պրոշուտո	միս, ձեթ, . .	130	80	300
24	բուրիտո	լոշիկ, միս, լոբի, ձեթ,	230	250	450
Հավի մսով					
1	Հավով կաչատորա	Հավի միս, տոմատ, սոխ, գինի, աջիկա, ձեթ...	150	160	300
2	Հավի մսով, ռոքֆորով սոուս	միս, բանջարեղեն, ռոքֆոր պանիր, սոյայի սոուս, ձեթ...	150	160	250
3	Հավի նագետիներ	միս, այլուր, ձու, ձեթ	80	50	250
4	Հավի մսով, չինական ճաշ	միս, բանջարեղեն, բուլղ. պղպեղ, սոյայի սոուս, ձեթ...	170	180	234
5	Բլինչիկ Հավով ու սնկով	հավի միս, սունկ, կաթ, ձեթ...	80	50	240
6	Հավի Եսկալոպ	միս, հոլանդական պանիր, սունկ, ձեթ, . .	140	90	400

	Կերակրատեսակ	Բաղադրություն	հուն մթ-ի քանո՞ւ (գր)	եփած մթ-ի քանո՞ւ (գր)	Միավորի գինը /ՀՀ դրամ/
7	Ֆրիկասե	հավի միս, սունկ, գինի, անանաս, այլուր, կարագ...	170	190	240
8	Հավով զարմոշկա	հավի միս, սմբուկ, ձեթ...	140	90	240
9	Խորոված կրծքամիս	միս, թթվասեր, ժիդկիյ դիմ, ձեթ, քարի . .	130	80	300
10	Հաց, լցունած հավով	Հաց, հավի կրծքամիս, սուլուզունի, մաննի, ձու, տաքդեղ, ձեթ ...	260	170	240
11	Հավի կոտլետ բանջարեղենով	միս, սոխ, բանջարեղեն, պաքսիմատ, ձեթ	140	90	200
12	Պալիբո հավի մսով	հավի միս, խառը բանջարեղեն, տոմատ, մեղր, ձեթ	190	120	240
13	հավի կոտլետ	միս, սոխ, պաքսիմատ, ձեթ...	120	80	300
14	Հավի քյաբաբ	միս, սալ, սոխ, կարագ ...	100	60	350
15	Հավի մսով պիցայուլա	հավի միս, գինի, տոմատ, սոխ, ձեթ...	130	80	250
16	կիկյան կոտլետ	միս, կարագ, պաքսիմատ ...	140	80	400
17	հավի մսով, սնկով լցունած կոտլետ	միս, սոխ, պաքսիմատ, ձեթ, սունկ, պանիր	140	90	360
18	պանրով լցունած կոտլետ	միս, սոխ, պաքսիմատ, ձեթ, պանիր	140	90	360
19	հավի մսով շաուրմա	լավաշ, միս, կարտոֆիլ, կաղամ, ձեթ...	270	300	400
20	Հավով ժարկո	կարտոֆիլ, հավի միս, ձեթ, սոխ, պղպեղ	160/60	230	360
21	Հավի լանգետ սոուսով	միս, սոյաի սոուս, թթվասեր, . .	140	90	450
22	Հավի լանգետ	միս, ձեթ..	130	80	400
23	Լանգետ պանրով ու պոմիդորով	միս, պանիր, պոմիդոր, ձեթ	150	90	450
24	Լցունած կրծքամիս	միս, գազար, եգիպտ, ձեթ. . .	140	90	450
25	Չքմեռուկի	միս, թթվասեր, պանիր, կարագ, սոխ	220	180	400
26	Հավի միս աջիկայով	Հավի միս, աջիկա, տոմատ, ձեթ ...	170	180	240
27	Կուլչմաչի	սիրտ ու թոք, սոխ, սխտոր, աճիկա, խմելի-սունելի, ընկույզ, տոմատ, գինի, ձեթ. .	180	190	240
28	Քարաջիկով ձվածեղ	քարաջիկ, դդմիկ, ձու, սոխ, ձեթ	220	180	300
29	Շնիցել	միս, գազար, ձեթ, ...	130	80	360
30	Հավով հիացմուկ	հավի միս, կարտոֆիլ, պանիր, սոխ, թթվասեր, . .	140	90	250
31	Հավով ու բանջարեղենով ճաշ	միս, խառը բանջարեղեն, տոմատ, մեղր, ձեթ, . .	180	190	250
32	Հավի մսով ու սնկով ճաշ	միս, սունկ, թթվասեր, ձեթ, . .	200	180	360
33	Հավի ձողիկներ	միս, պաքսիմատ, ձու, ձեթ	80	50	240
34	Կեսադիյա	այլուր, ձեթ, տոմատ, հավի միս, ձու	220	210	400

	Կերակրատեսակ	Բաղադրություն	հուն մթ-ի քանո՞ւ (գր)	եփած մթ-ի քանո՞ւ (գր)	Միավորի գինը /ՀՀ դրամ/
35	Կեսադիլյա տաքդեղով	տաքդեղ, ձեթ, տոմատ, հավի միս, ձու	230	220	450
36	Խաշլամա հավի մսով	միս, կարտոֆիլ, պղպեղ, պոմիդոր, սոխ, կարագ...	220	240	270
37	Հավով ու սնկով ժուլյեն	միս, սունկ, կարագ, թթվասեր.	190	170	400
38	Ալբանական կոտլետ	միս, ձու, սոխ, կարագ...	130	80	270
39	Հավով կոլյոկ	Հավի կրծքամիս, կուկուռուզ, գարոխ, թթվասեր	130	80	240
40	Արաբական	հավի միս, սմբուկ, սխտոր, կարագ....	180	180	240
41	Վրացական ճաշ	Հավի միս, ընկույզ, թթվասեր, կանաչիներ, ձեթ...	150	180	210
42	Հավի կոտլետով էսկալոպ	միս, սոխ, լոլիկ, պղպեղ, ձեթ...	140	90	210
43	Ֆրիկասե	հավի միս, սունկ, գինի, անանաս, այլուր, կարագ ...	170	180	270
44	Հավի ռուլետ բաստուրմայով	միս, բաստուրմա, ձու, ձեթ. . .	160	100	400
45	Կորդոն բլյու	հավի միս, հոլանդական պանիր, վիչինա, պակսիմատ	130	80	270
46	Բուրիտո	լոշիկ, միս, լոբի, ձեթ,	250	290	400
47	Լավաշով հավով ռուլետ	լավաշ, միս, զազար, սոխ, թթվասեր	150	100	360
48	Գուլյաշ	միս, սոխ, համեմ, ձեթ տոմատ, պղպեղ	170	180	240
49	Հավ՝ տոմատի ու ընկույզի սոուսով	Հավի միս, ընկույզ, տոմատ, ձեթ 10գր...	160	190	300
50	Հավի գրպանիկ սնկով և պանրով	հավի կրծքամիս, սունկ, պանիր, ձեթ...	130	80	240
51	Հավով ու սպանախով փախլավա	լավաշ, միս, սպանախ, թթվասեր	210	140	240
52	Հավ մեղրի սոուսով	միս, տոմատ, մեղր, ձեթ, . .	150	180	240
53	Անտրիկոդ	միս, թթվասեր, սոխ, կարագ, պանիր	210	200	240
54	Չախոբիլի	միս, սոխ, տոմատ, ձեթ	170	180	400
55	Տապակած բդիկ, մեղրով	միս, մեղր, տոմատ, ձեթ	220	140	390
56	Տապակած բդիկ	միս, ձեթ	200	130	360
57	Հավի կրծքամիս լցունած սնկով և պանրով	Հավի միս, սունկ, պանիր, ձեթ...	160	100	450
58	Տապակած հավ	միս, ձեթ	160	100	350
